59. ՍԱԴԱՓՅԱ ԽԱՆՈՒՄ

Կէլնի չէլնե, կէլնի կէլնի մեյ թագավոր: Էսա թագավուրու կնկան իսկի տղա չէլնե, ո՛չ լաճ, ո՛չ աղջիկ: Թագավուրու կնիկը ախ ու վախ կանի, զաթեն չի պտղե, օրորոցի երես նստած չէլնե, ուր կյանքի մեջ ծնունդ չի նստե:

Զըմեն օր թագուհին կնստեր փենջարեն, կիրիշկեր դեխ էրկինք-գեյտինք, էրունք, թռչունք, որ իրենց ծագեյր թիվքյներաց վերեն առեր կթռուցեն, կուտ կուտան,- կճլվլան, կվլվլան բոնի մեջ:

Ինքը շատ մալուլ-մռութ կէլնի, կկանչի էրկնուց խավքեյրաց.

- Ա՜խ, էրունք, թռչունք, էրնեկ ծե, որ կպտղեք, որ ծնունդ կնստեք: Ծող ձիկ էլ էլներ մեյ որթի, թայլա քիյ օձու ձագ էլներ:

Աստված կլսի թագավուրու կնկայն ձեն. ինն ամիս որ կթմմի՝ կբերի մեյ խատ կանաչ ճպլտուն օձու ձայգ: Իդոր վերեն շատ կուրախնան, շատ խնդում կանեն, կդնեն իրենց էօդի պատխան: Օձու ձագյուն օրն մեկ խավու ձու թային կանեն: Խավու ձունը որ կխլսի, էլ չմնա՝ օր մեյ պզտիկ զյառ. յա մեկ ուլ կուտան, էն էլ կուտի չկշտանա. կբերեն օր մեկ աղջիկ թային կանեն: Էն էլ որ կխլսնի, կմնա մեկ աղբյտի աղջիկ. էն էլ խորթ մերը ուր աղջիկ չիտա. ուր փոխնկի աղջիկ կուտա որ տանեն. թայլա որ իրենց երեսից զատանա:

Խորթ մոր խորթ աղջիկը կուլա կմռմռա, կասի. «Աստված որ կսիրեյք՝ ձիկ մեյ խատ տարեյք վեր իմ խսլալ մոր գերեզմնին, կուշտ մի լամ, ասպա էրթամ օձուն կեր էլնեմ. թող էն օձը ձիկ ուտի»: Աղջկա խնդիրը կկատարվի. կտանեն վեր մոր գերեզմնին. էնտեղ կուշտըմ, ուր խավասով կուլա, ընչամ կինի վեր գերեզմնին կպոտվի, կուլա չյում քունը կտանի: Մերը կուզյա էրազ, կասի.

- Աղջի՛կ, ինչի՞ կուլաս, վեր կաց, լսիր ինչ որ քե կասեմ: Որ քե կտանեն թագավուրու տուն՝ ասա՛ որ քե խամար բերեն ոզնկան շապիկ. շապիկ կքաշես երեսիտ վերեն, ըսկուն կնստես օձու դիմաց դեմ ու դեմ, կիրիշկես ինոր աչքերաց մեջ: Օձը կիրիշկի դեխ քե, շատ էլ շուռ-մուռ

կուփա ուր պոչ, ուր երեսն, ուր ջանդակն. կծվա կֆշա-կֆշֆշա. ամա չէլնի որ վախենաս, ինչ որ կանի՝ քյո փեոից չդնդաս: Իրեյք դան քյո երեսն վեր փփվելուց եփ՝ ապա ասփծու խրամանքյով ինոր լեզու կէլնի, խեփ քե քյաղյր վ անուշ խարար կուփա, կասի. «Աղջիկ, աղջի՛կ, ջան մարալ աղջիկ, խան քյո ոզնեղեն շապիյկ, որ քյո երեսը լավ փիսնամ»: Տյուն էլ սաս՛. «Օծիկ-մօծիկ, ճլպլփուն օծիկ, խան քյո օծեղեն շապիյկդ, որ ես էլ խանեմ իմ ոզնեղեն շապիյկ»: Չյում էն չըխանի ուր շապիյկն՝ փյու էլ մի խանե:

Աղջիկը մոր գերեզմնի վերնից վեր կխանեն, կփանեն դա՛շ թագավուրու մոփ: Առջի բերան թագավուրույ խնդիր կանի, կասի. - Թագավոր ապրած կենա, ամր արա, որ բերեն ծիկ խամար մեյ խափ ոզնկան շապիյկ, խայնեմ, էրթամ քյո խրամանն կափարեմ, քյո օծը նոր թող ծիկ ուփի:

Թագավորը ամր կանի, ոզնկան շապիյկ կբերեն: Աղջիկը կառնի վեր ուր իրիսներայ. կփանեն կխճեն օծի էօդեն, դռները պինփ-պինփ կփակեն ինոնց էրկսի վերեն:

Օծն ի, որ կփիսնա աղջկա իրեսի քողը՝ ուր պոչն ու ջանդակ շուռ-մուռ կուփա, կֆշա-կֆշֆշա, ղըրըփ, իրեյք դան կթռնի, կպփվի աղջկան երեսն վեր, չկանա ուփե. դյոր որ մռութ կէրկնցուցի փուշ ի՝ փշերը կխթվեն ուր աչքերայ: Կնաչարանա, կխնդրվի աղջկան, լեզուն կխանի չյում կես գյազ, կասի. - Աղջի՛կ, աղջի՛կ, սիրուն աղջիկ, ջան մարալ աղջիկ, որ քյո ասփուած կսիրես՝ խան էփա քյո ոզնեղեն շապիյկ:

- Դաշ փու խան քյո օծեղեն շապիյկ, որ ես էլ խանեմ իմ ոզնեղեն շապիյկ:

Օծը որ կխանի ուր կապուփ ու սիվփակ շապիյկն՝ ի՞նչ... կդառնա մեյ խափ սրալ-մարալ պափ կփրիճ փղեմ: Կնսփի էօդի օրթալաղ. չուփես չխմես, հա՛ հա՛ ինոր իրեսն իրիշկես. ինոր բաժ ու բուսունին մփիկ անես. ինոր կթըղա աչքերայ, փապլակ իրիսներին: Աղջիկն էլ ուր ոզնեղեն շապիյկ կխանի, կէլնի խուրն-խրեղեն:

Լաճը որ կփիսնա ինոր խորոփկութեն՝ մայիլ կէլնի, կթալթլվի, էլ չկանա խավ չէ, մի բան ջուղաբ փա աղջկան:

Շափ կմնան թե քիչ, էրկուսն էլ էփա էօդի մեջ, օրըմ թագավոր կասի. «Էսա ի՞նչ բա̈ս ի, էլ ո՛չ օծու կռկռոց կա, ոչ էլ աղջկա ծենծյունը կա. չէլնի՞ մեկ վողյա իկեր ի իսոնց էրկսի վերեն էլ»: Ամր կանի ուր մարդերայ, կէրթան ոհ աչկեն:

Լաճ վ աղջիկ սուս-փուս նսփած իրարու փեսքին մայիլ են: Մարդերը որ կէրթան, էօդի դուռ կբանան՝ կփիսնան ի՞նչ... զարմանյք կմնան, էրկու բաբաթ նորախաս պափ կփրիճներ, աղջիկ ու լաճ, նսփեր են, մեկզմեկու իրեսն կիրիշկան: Կշվարեն, իրանց չլփրմիշ կանեն, էլ ուրախութնե չեն գիյփե ինչ անեն: Կվազեն շոփ մոփ թագավորն ու թագուհին:

- Մուժդա, մուժդա, թագավոր ապրած կենա, մուժդա կուզենք, պիփի

փաս, պիտի փաս, ասպված ձե ջամուկ* փդա ի փվեր, - պոռալով կանչելով կլյվեն թագավուրու մոտ:

Թագավորն ու իր կնիկ որ կլսեն՝ կզարմանան. էլ ուրախութնե չեն գիյտե ինչ անեն. կվազեն կուզյան ինոնց մուր: Խերը տղեն կգյրկի, մերն էլ աղջիկն. պոչ-պոչ կպաքեյն, կպաքեյն-չեն կշտանա. ես ասեմ մեկ, տյու ասա խազարը մեկ պայք կառնեն իրենց տղեյներայ երեսից:

Ձենը կիյնի աշխարհ. հըմեն կողմից կվազեն կուզյան թագավուրուն ու թագուհուն աչքալուսի: Իշխաններ, վազիրներ, չորս կողմից կլյվեն էնպեղ: Էլ ոսկի, ակունք, ջավահիր ի որ կթափեն լաճ ու աղջկա գլխի վերեն. աղքայպին ու զենկին մեկ հաշիվ էր էն օր. զըմենին էլ ուրախութնից փայ կեր:

Խաբար կէրթա, կխասնի աղջկա խորթ մոր ականջն էլ: Խորթ մերը էլ չգիտի ի՞նչ անի, կմտմտա ուրիշ չարութեն: Ջուղաբ կանի թագավուրուն կասի, որ. - Թե հարսնիս կանեյք՝ մեր աղջիկը օղորկեյք մեր տուն. թող խարսնավորները գյան, մեր տնից բերեն խարսը:

Ախըր խորթ մերը ուր չար մտքով աղջիկը թագավուրու տնից տանել կուտա մոտ ինք. օրըմ կառնի խետ ուր խալալ աղջկան, կտանի ծով որ լողկցուցի. ինոր միտքը չար էր:

Ուր խալալ աղջկան կկայնըցուցի ծովի ափին, խորթին նշանց կուտա ըսկուն մեյ փոս տեղ, որ թե ինի՝ էլ չկանա կայնե: Աղջիկ կինի ծովու էն փոս տեղ, չկանա տյուս գյալ:

Խորթ մերը ըսկուն թախմին կանի, որ խորթ աղջիկ գյո խեղտվավ, պրծավ: Ինոր շողշողուն խալավ, խագիյստ կխակցուցի իր աղջկան, կպիրի տուն, ծամերը կսանդրի, կզարդրի, որ էն մեկել օր թագավուրու տղի խարսնիսն ի:

Ծովն ինկայծ աղջիկը աստծու խրամանքյով վեր կթռնի էն փոս տեղից: Ծովուն դնդողը ինոր կտանի, կտանի, կխանի մեյ ցամայք տեղ: Դեն կիրիշկա, դես կիրիշկա, անտակ ծովուց, անխլիս դաշտից ի զատ շեն-շենլիք, մարդ, անասուն չէրևա. գյահ-գյահ էրկնուց խավքեյր կուզյան կթառեն, էլմ շոտ-շոտ կթռնեն կէրթան:

Թագավուրու լաճը խարսնիս կանի, ուր նշանլուն կտանի. կավատա որ էն ուր փիսած ու խավնած աղջիկն ի. չգիտե որ խորթ մոր աղջիկն են դրե ինոր տեղ բերե. էն կանդար բան չկանա շոտով ֆահմե, իմնա:

Ծովուց դուրս էկած աղջիկն էլ ընչանքյ կմնա էն տեղ՝ կուլա, կաղավըղի, որ աչիչ արտայուք կիջնի գյլոլ-գյլոլ կթափի ուր չորս բոլոր մարգրտի խատերի պես:

Իտոնքյ թող ըսկուն մնան իրենց տեղ:

Ուրիշ մեյ թագավուրու կնիկ էլ ահդ արեր ի խետ աստծուն, ասե, որ թե ինոր լաճ տղեմ էլնի՝ էլնի մեյ խավք, յոթն տարի էրկնուց երես ֆռա, աշխարհ, ա՞լամ կան գյա, ապա նոր պսակվի խետ ուր ուզած

* Ջամուկ նշանակում է երկվորյակ: Վասպուրականում սրա անունը տրվում է առհասարակ երեխայոց. նոքա միայն որոշվում են լաճ-տղա աղջիկ-տղա անվամբ (Ծ.Ի-).

աղջկան: Էտա թագավուրու տղի վեց տարին կթմմի որ էլեր էր խավք. կֆռա-կֆռֆռա, կուգյա վեր էտա ծովու կղզուն խանք կառնի, կնստի. կտիսնա որ ի՞նչ... մեյ խուրն-խրեղեն աղջիկ, շվարած ինկեր ի դես դեն, չգիտե ուր էրթա, մերկ ու տկլոզ, անոթի ու ծարավ:

Էտա խավքն ի, կինի դես դեն, կթռնի կէրթա տանըսներաց վերեն, որ տեղ լվացք են արե. հըմեն տանըսից, հըմեն բակից մեյ-մեյ կտոր շոր կբերի, կխագյուցի աղջկան, աչքերից թափած արտսունքն էլ որ էլեր էր մարգրիտ՝ կժողվի կլցի մեջ բանի մը, կդնի վեր ուր թնքեյրաց, կառնի կտանի ուրենց տուն:

Մոր կասի. - Մարե՛, ա՛ռ էսա ամանաթը խորոտ պախի, չյում որ իմ վաղդեն թըմըմի. մե տարուց ետ գյամ, կպսակվեմ. աստված էսա աղջիկ ձիկ կսմաթ էր արե:

Խավքը կէրթա ֆռալու, ուր մեյ տարին հալա մնացեր ի պակաս, ամմա սիրտը դեխ աղջիկ կփթփթա: Տիսնանք էսա ավի տերն վո՞վ կէլնի, աստվածն ի խաբար:

Գյանք դեխ մեկել թագավուրու լաճ, տիսնանք ի՞նչ էլավ:

Խորթ մոր աղջիկը գյո զարվե-գարդարվե, կվելի-կվայելի էն զըմեն վայելչութեն, որ խորից մորից չէր տիսե: Թագավուրու լաճն էլ հեչ էն տեղվանք չի, թե ուր նշանած աղջիկը փոխել են, գեյշը դրեր են խորոտի տեղ:

Էսա մեկել թագավուրու կնիկն էր, առե ծովուց էլած աղջիկը նստե, էրկեն-բարակ խառց-փորձ կանի. - Աղջի՛կ, մեկ ասա տիսնանյք, տյու վո՞վ ես, ո՞ր տեղից ես, անունդ ի՞նչ ի, ի՞նչխ էլավ որ ըստեղ էկար:

- Իմ անունը Սատաֆյա խանում ի. էնա երկրի թագավուրու լաճը օձ էր էլե, ձիկ տարան ինոր մոտ որ ձիկ ուտեր. էն չկուրաց վեր ձիկ, տփվավ իմ երեսն վեր, իմ երկու ատամ տեղիցն ինկյավ, ինոր տեղ դրին երկու սատաֆ ատամ: Ապա թագավուրու տղեն ձիկ խավնավ, պիտի աներ ուր կնիկ. իմ խորթ մերը ձիկ գլորեց ծով, ուր աղջիկը տվեց իմ փոխան: Աստված ձիկ ազատեց ծովուց, տյուս էլա. ձեր խավք-տղեն առեց վեր ուր թիվքեյրաց, ձիկ բերեց չյում ըստեղ:

Թե ինչ որ ուր գյլխովն իկեր էր՝ աղջիկը զըմենը պատմեց ինոր:

Աղջկան կդնեն մեյ նիշուն էօդեն. ամա ի՞նչ օգուտ, ոչ ծաղր, ոչ ժպիտ ասես, չիգա ինոր երես. մալուլ, մռութ օր կանցուցի: Մարդախավքն էլ՝ օր տամ կուգյա, ինոր աչք կուտա, կէրթա դաշտեր ֆռալու: Օրմ՝ էլ կխառցուցի, կասի. - Սատաֆյա խանում, ի՞նչխ ես, հալիկդ խո՞շ ի, ի՞նչ քեֆի ես:

- Հալս էլ խող, օրս էլ խող, առանց քյեգի իմ օրը օր չի:

Մարդախավքու վաղդեն կթըմըմի, կուգյա տուն, շատ ուրախութենով իրենց խարսնիս կանեն, կպսակվեն:

Շատ կմնա, քիչ կմնա՝ աստված ինոնց մե խորոտիկ լաճ տղեմ՝ կուտա. կպախեն կպախպանեն, կդնեն վերին դիվանխանեն ոսկի օրորոցի մեջ, մարգրտե ծածկոց կքաշեն վերեն:

Օրմ՚ էսա թագավուրու լաճը մոր կասի. - Մարե՛, ես պիտի օձ թագավուրու լաճուն դավաթ անեմ, բերեմ մեր տուն. քյո խարսը ինոր վերեն շատ բան գիյտի:

Շատ մեծ թստպիր կտիսնան, օձ թագավուրու լաճը ուր սիրած մարդերով կկանչեն դավաթ: Շատ մեծ ուրախութեն կանեն:

Ծովու աղջիկ, որ բերան կբանա կծծղա՝ ինոր սատաֆե ատամները թագավուրու լաճը կտիսնա, շուֆալամիշ կելնի, միտ կուգյա, որ էտա ուր տիսած ու սիրած ոզնու շապկավոր աղջիկն ի: Մատը կկծի. ինքն ուր դյուշյումիշ կելնի, կքաշվի մեյ յան, էլ ձեն-ձուն, ասել խոսել չանե, ո՛չ ուտել, ոչ խմել. ալնախ կդնի երեսին, ընքյուռ-ընքյուռ կուլա:

- Ի՞նչ էլավ քեյգ, ինչի՞ կուլաս, - խառսյուց թագավուրու լաճ, - չէլնի մեյ վատ խաբար լսար մեր տան:

Օձ թագավուրու լաճը ջուղաբ չիտա, գյլոխ կախեր ի առաջ, էլ ամոթու չի կանա վեր վերուցե, իրիշկե:

- Ի՞նչ մեղքս պախեմ, - կասի, - էտա քյո կնիկ, իմ խին նշանածն ի, ինոր սատֆե ատամները ինոր նշան են:

- Էլմ՚ քյոն ի՝ քյոն, բարով վայելես, մարդ քյո մալին չկանա տիրութեն անի, - կասի էսա մեկել թագավուրու լաճը, - ես էլ էնա ծովու կղզուց բերեր եմ:

Ապա իրենց գյլխով գյուսյածն զըմեն էլ մեկ մեկու կպատմեն:

- Իմացիր, որ էնա լաճ-տղեն էլ քյոնն ի, բարով վայելես. մենք հալատել ըյոր վ աղբեր ենք, մարդ մեր էյութեն չիմցե: Տա՛ր որ տար, խալալ սրտով եմ տվե քե:

Մեկ շաբաթ էլ վերջ՝ շատ պատվով, շատ ասքյրով, բազմութենով, ձիավորներով օձ թագավուրու տղեն ուր նշանլուի խետ ճամխու կդնեն, որ կէրթան իրենց տուն: Օձ թագավուրու տղենը կառնի ուր նշանած, որ տուն կմտնի թե չէ՝ էլ խորթ մոր աղջկան օր-աստվոր չմնա: Ամր կանի ջալաստներուց, ձեռ-ոտը կկապեն, ճյոչ պրտուզը ականջ կթողնեն:

Աստված նոր օր, նոր կյանք կուտա ինոնց: Ախըր վերջ Սատաֆյա խանումը և ուր օձ երիկը կխասնեն իրանց սրտի մուրազին: Աստված մեզի էլ խասուցի մեր սրտի ուզածին: